ւած գիւղում ս. Սահակ նահատակ վարդապետի գերեզմանի վերայ մատուռը՝ Պօղոս աղան է կառուցել տուել վերոյիշեալ իւր Մարկոս որդու ձեռամբ. մատուռի շուրջը պարսպապատել է տուել և խուցեր կառուցել ուխտաւորների համար, ուր յաճախելիս են եղել Զամախի քաղաքից և կամ շրջակայ գիւղերից շատ ուխտաւորներ (տես երես 170)։

1826. Լուտերականութիւնը Զամախի մուտ գործելուց յետոյ հետզհետէ պակասել է ուխտագնացութիւնը որպէս այնտեղ՝ Քարքանջ գիւղում, Նոյնպէս և Սաղիանու ս. Ստեփաննոսի և Մէյսարու վանքերում։

Ձիրվանում պարսից խանութեան ժամանակ հայերէն լաւ իմացող ուսեալ քահանայի կարեւորութիւն ունենալով՝ խանի ցանկութեամբ Մարկոս աղային Յակոբ եպիսկոպոսն Զամախեցի՝ որ ապա կաթուղիկոս՝ յամին 1730 ձեռնադրում է քահանայ, որ կոչւում է Տէր Մարկոս։ Տէր Մարկոսը ունենում է երեք որդի. առաջինը Պետրոս, երկրորդը Ներսէս, երրորդը կոչվում է Պօղոս իւր մեծ հօր (պապ) աղա Պօղոսի անուամբ։ Պետրոսը ապրում է 101 տարի, որի թոռներից ոմանք գտնվում են տէրութեան ծառայութեան մէջ, ոմանք պարապում են առեւտրական գործերով։ Ներսէսը չամուսնացած՝ վախճանվում է, իսկ Պօղոսը ծնողներից զրկուելով՝ որբանում է մանկական հասակում վեց տարեկան ժամանակ։ Տէր Մարկոսի և նորա որդի Ներսիսի մարմինները ամփոփուած են Սաղիանի ս. Ստեփաննոսի վանքի բակի գերեզմանատանը[1])։

Տէր Մարկոսի փոքրիկ որդի Պօղոսը հետզհետէ աճելով զարգանում է և պարապում վաճառականութեամբ. յետոյ սկսում է բանալ մետաքսեայ գործարան Զամախում. սորա առեւտրական գործը յառաջ է գնում. ուստի և ինքը յարգւում և սիրելի է դառնում տեղական ժողովրդից և խաներից, չի խնայում իւր ձեռքից եկած օգնութիւնը թշուառներին. հետզհետէ նորա անունը հռչակւում է։ Մի անգամ Ձիրվանի յայտնի Աղա-

---

[1])Տես յերես 76. ըստ վաղեմի սովորութեան՝ նշանաւոր մարդկանց մարմիններն վանքերումն էին թաղւում։